Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 463-Ա որոշման

«ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՔԱՐԱԹԱՓՄԱՆ ԴԵՄ ՀԱՐՎԱԾԱԿԱՅՈՒՆ ՀԵՆԱՊԱՏԻ
ԵՎ ՑԱՆՑԱՊԱՏԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐԸ

1.	**Ծրագրի նպատակը**	Նվազեցնել սողանքների և քարաթափման ռիսկերը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո-Դիլիջան 12 կիլոմետրանոց Մ 8 միջպետական ճանապարհի 6-րդ կիլոմետրում (Կոորդինատ 40.715746, 44.772593) հարվածակայուն հենապատի կառուցման և քարաթափման դեմ ցանցապատման միջոցով:
2.	**Ծրագրի բարեգործական որակման նպատակը**	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	**Բարեգործը**	Ճապոնիայի կառավարություն՝ ի դեմս Հայաստանի Հանրապետությունում Ճապոնիայի դեսպանության (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան 0037, Բաբայան փողոց 23/4):
4.	**Ծրագիրը կատարողը**	«Հայաստանի համայնքների միություն» հասարակական կազմակերպություն (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Աբովյան 2202, Բարեկամության Հրապարակ, շենք 1, Կոտայքի մարզ, ՀՎՀՀ՝ 03534085):
5.	**Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը**	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո-Դիլիջան 12 կիլոմետրանոց Մ 8 միջպետական ճանապարհի 6-րդ կիլոմետրում (Կոորդինատ 40.715746, 44.772593), բնագավառը՝ արտակարգ իրավիճակների:
6.	**Ծրագրի բյուջեն**	26,767,119.80 դրամ
7.	**Բարեգործություն ստացողը**	Հայաստանի Հանրապետություն
8.	**Ծրագրի իրականացման տևողությունը**	2025 թվականի հուլիսի 20-ից մինչև 2026 թվականի հունվարի 31-ը

9.	**Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը**	Հարվածակայուն հենապատի կառուցում և քարաթափման դեմ ցանցապատում՝ 26,767,119.80 դրամ, նախատեսվում է իրականացնել 2025 թվականի հուլիսի 20-ից մինչև 2026 թվականի հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում:
10.	**Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը**	Հարվածակայուն հենապատի կառուցման և քարաթափման դեմ ցանցապատման աշխատանքների իրականացում՝ 26,767,119.80 դրամ, առանց ավելացված արժեքի հարկի:
11.	**Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը**	Չեն նախատեսվում
12.	**Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ**	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովոյի համայնքապետարան
13.	**Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը**	«Հայաստանի համայնքների միություն» հասարակական կազմակերպության խորհրդի, վարչության ու վերստուգիչ հանձնաժողովի կողմից: Ամենամսյա ֆինանսական ու ծրագրային հաշվետվություններ են ներկայացվելու դոնորին՝ Հայաստանի Հանրապետությունում Ճապոնիայի դեսպանությանը: Հոգաբարձուների խորհուրդն ունենալու է ծրագրի արդյունավետության վերահսկման գործառույթ: Ծրագրի շրջանակներում իրականացվելու է արտաքին աուդիտ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

14.07.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ